

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ՔԱՆԻ ՄԻ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ.)



ՈՒՍԱՄ Թէ ձեր ամսաթերթին մէջ անկիւն մը կը նուիրէք իմ այս փոքրիկ հատուածիս, որու նպատակն ուրիշ բան չէ՛, բայց միայն երկարել կամ կրկնել բա՛նասիրաց ուշին մէջ այն արձագանգը, զոր ներկայ տարւոյս Յուլիանայի թուոյն մէջ ազնեց Հնչեցընել Բագմալեպե իւր առաջին յօդուածով: Կ'ուզեմ համաձայն մի քանի գիտողութիւնները ներդրուած հայ թերթերու օտարամոլութեան մասին, որոնք չգիտեմ ինչ պատճառաւ ձգած մեր բնիկ բառերը, օտարէն մուրալով և կարկատուն գգեստ մը հազցնելով իրենց բաւական նոր և ճոխ գաղափարներուն, գրիչի ձեռին անխտիր կը նետուին յասպարէզ թերևս և հայերէն լեզուի և քերականութեան կանոններ ևս տալու յուսկնութեամբ... Սկըսինք այդ բառերու աւելի հարտարէն և փափուկէն, որ է «Շանտաժականութիւն»:

Ահաւասիկ բառ մը որ, երկտարական հոսանքի չափ, կը ցնցէ մարդուս լիզերը. զգուտեղ ընթերցողն՝ իւր հայերենի գիտութեան վրայ վստահ միտքը պիտի չարչարէ զայն ըմբռնելու համար, զգուտեղ բառարանները և քերականութիւնները պիտի մայցցնէ այդ «աղիատարող» բառին մեկնութիւն մը գտանելու համար: Ի՞նչ պիտի ընէ ապա. անշուշտ ստուգարանութեան կամ լուծման պիտի դիմէ, և իսկոյն անոր մտաց առջև յըստակ պիտի պատկերի բառին կազմութիւնն կամ արմատն. որ է, շոն (սեռ. շան) և տաժական (տաժան, տաժանի բառերէն), և մտքէն հարտարելով իմաստ մը, պիտի գոչէ — Աղբիւնդայ չափ պարծնալով — Գառի (ծերդա). — Եւ սակայն կը սխալիս, ուշիմ ընթերցող. կան օրագիրներ՝ զորս հասկնալու համար պէտք ես կ'առնուին և փայրիկեալ քաղ մտանալ հայերենի հմտութիւնդ և քե-

րականութեան կանոնները, և ամէն մէկ բառին՝ որ քեզ օտար կը թուի՝ պէտք ես մտաւոր տաժանելի գործողութիւն մ'ընել. այսինքն է, բոլոր քեզի ծանօթ և անծանօթ լեզուաց մօտաւոր բառերը միտքդ բերելու և տառերը փոփոխելու ես, մերթ պիտի կըտրատես, պիտի բաժնես, և մերթ պիտի միացնես, ասդին պիտի քաշես, անդին պիտի տանիս, ամբիփես, երկարես, — և ինչո՞ւ երկարեմ խօսքս, — ամէն կերպ և կողմ պիտի ճկես լեզուդ և ուշդ, մինչև որ յաղողիս՝ անշուշտ ոչ առանց քրտնելու՝ բառին ծագումը գտնել և հասկնալ գորղին միտքը: Առանց չափազանցութեան այդ բոլոր գործողութիւնները կատարեցի մտքիս մէջ, երբ վերջերս պատահամար ձեռք առի Նոյր-Դարի անցնալ տարուայ դեկտեմբերի թերթերէն մին, և պատահեցայ այդ տարօրինակ «Շանտաժականութիւն» բառին:

«Շանտաժականութիւն» բառին բուն արմատն է, — կարօղ էք գուշակել, (գիտնոց համար չէ խօսքս), — գաղղ. chantage բառն, որ երեք տարրալուծական գործողութեանց ենթարկուելով, նախ պարկեշտ գգեստ մը հազեր (շնորհիւ գրողին) և եղեր է շանտաժ. յետոյ, քնական է որ ուրիշ քայլ մ'ալ պէտք էր ընել, հոգ չէ՛ թէ՛ երկայն կամ կարճ կարալու չափ, և եղեր է շանտաժական (կէս հայ-կէս փռանկ), որուն վրայ քարին պոչն ալ կցելով՝ բոլորովին հայացեր և եղեր է (և ինչո՞ւ պիտի չըլլար հարտար գրիչ մը տակ) «Շանտաժականութիւն», որ յիշուի պատիւ կ'ընէ հեղինակին:

Յետ ճշդելու թէ Բնչ ասպարիցի մէջ կը գտնուինք, որ է՛ հայերենի սահմաններէն դուրս՝ կարող ենք արդ բառին բուն մեկնութիւնը տալ. Chantage կը նշանակէ, Սպառնալեք յայտնելու մէկու մը գաղտնիքը՝ բռնի դրամ կորզել. Նոյրայր կը թարգմանէ

զայն. « Կծանեւն յումեղէ արծաթ սպառնալով ի վեր հանել զգաղանիս ինչ կամ աղարտել զհամբաւ նորա » . Կուպարեան կը դնէ . « (Հրատարակման սպառնալիք) — Ինչ բանի հրատարակման — արծաթազուլութիւն . կորզուստ » . Իսկ Տէմիրճիպաշեան կ'ըսէ . « Արծաթազուլութիւն սպառնալիք . կծանք » . « Ներկայ տարուայ Ֆիկարոյի վերջին թերթերու միոյն մէջ հարցում մ'եղեր էր այս խնդրոյ մասին, թէ ինչ է արդեօք « *chantage* » և « *maîtres-chanteurs* » բառերուն ծագումը . որուն պատասխաններ էր նոյն թերթն հետեւեալ թուոյն մէջ . « Զըվ նորաութեան լեզուի մէջ *chantage* կը կոչուի այն միջոցն կամ գործողութիւնն, որով յաւառ հանելով և վախճընելով ձկները՝ կ'երթան ուսկանին մէջ կը բռնուին » . Հետեւաբար *maîtres-chanteurs* կ'ըսուին նոցա, որոնք յայտնակը են այսպիսի շահատակութեանց մէջ, որոնց օրինակները այս վերջին տարիներս յիշրոպա, և յատկապէս լրագրագաղտի դասուն մէջ, յաճախ կը տեսնուին, զատ իս այդ բառն կարելի է թարգմանել . Սպանալիք բոնի արծաթաշաղկապիւն, և կամ, եթէ մէկ բառով կ'ուզենք բացատրել, կծանք, ինչպէս դեր է Տէմիրճիպաշեան, որ թեբեկս կը մօտենայ իմաստին . Սկսայն, այսպիսի յարմարական բառերու մէջ, լրագրոյն չէ՝ եւրոպական բառը պահել իւր ընդի տառերով, որ թերեւ նուազ ծիծաղելի ըլլայ, և կամ, յատուկ բառ մը ստեղծել հեղինակութեան մը վրայ յեցած և յատկացնել զայն այդ կամ այն ինչ բառին, դնելով մօտը նաեւ եւրոպական բառը :

Դարձեալ նոյն թերթին անցեալ տարուայ 219 թուոյն մէջ գրուած էր . « Այսօրուանից սկսած են ամբողջ Ֆրանսիայում հակադիֆտերիտեան շինուիլը, և այն » . Այն սերիշ հրէշաւոր բառ մ'ալ . գլուխը և ոտը՝ հասկերէն, իսկ մարմինը՝ ֆրանսերէն, ոչ . այլ ֆրանսացած յոյճերէն . հակակ և եանճ ծառիս են մոլը, հարկ չկայ խօսել . իսկ դիֆտերիտն կազմուած է յուն . *διφθερά* բառէն, որ կը նշանակէ մորթ, մաշկ, քաղաւթ . ուստի բառարաններէն ումանք այդ *diphthérie*, *diphthérite* բառի առջև կը դնեն . Կեղծամաշկ, կեղծամաշկութիւն (Հ. Մ. Քալուճի և Լ. Երայր), այլեւ կը դնեն թաղանթաքտութիւն (Տէմիրճիպաշեան), իսկ Կուպարեան կը դնէ . Ժանտոք, աքիտիտ (*) . — Ուրիշ տեղ մ'ալ . « Պալար զիպրամատիկական ճանապարհով բողբոջած է, և այն » . յուն . *δελπιδω* կը նշանակէ ո՞ր և է պետական կամ արքունի բողբոջ, հրաւած, վճիռ, և այն, որոյ արմատն է ըստ ումանց *δελπιδος* (կրկին) բառն, որովհետեւ կրկին

օրինակք կ'ըլլային այդ թղթոյ կամ վճռոյ, որոց բնագիրն կը պահուէր ի դիւանի . Այնչուստ այս պատճառաւ սովորաբար դիւանագետ և դիւանագիրտական կը թարգմանուին թուրքաւ թերթերու մէջ *diplomate* և *diplomatique* բառերն, որք աւելի ճիշդ, աւելի հայերէն, և աւելի ընտիրք են՝ քան դիպլոմատ և դիպլոմատիքական :

Սկսայն հետեւեալ կտորն, զոր կը քաղեմ նոյն թերթին 1894-ի 221 թուէն — և թուի թէ լուրջ և շայեկան լուր մ'է, — Բաղդասարի երեցածէն աւելի խորհրդաւոր և կարօտ սկսնութեան, փոխանակ միտք յոգնշնելու՝ կը օթափեցնէ այս անգամ . . . ծիծաղը քարծեկով . « Ամենաողորմածաբար տեսկրիպտ է հրատարակուած գէն . — առ . գրաֆ Դուլուի անունն, և այն » . կը շուարի մարդ թէ ինչ լեզուով է կարդացածն . Եթէ այդ տեսկրիպտն զաղղրերէն *rescrit* (լատ . *rescriptum*) բառն է, հայերէն կոնգակ, հրովարտակ, արքունի կամ կայսերական հրաման կ'ըսուի, Տէր Խմբակար, ինչպէս կը տեսնենք գործածուած առ նախնին :

Սկսայն, եթէ կարելի է փոքր ինչ անմեղադիր ընելու կետ մը գտնել այս բառերուն մէջ, որոնք նորահնար, ինքնաստեղծ և ըստ քիմս յարմարեցուած են, ընդ հակառակն կը մեղադրուին նոցա բողբոջի՝ երբ կ'անտարանան նաեւ այնպիսի բառեր, որոնք հայերէնի մէջ կը գտնուին նոյն իմաստով գործածուած, և ընդհանրապէս ընդունելի եղած են ազգին մէջ : Ինչպէս են, օրինակ իմն, գեներալ (*général*, զօրավար կամ զօրապետ), կապիտան (*capitaine*, լատ . *caput*-գլուխ բառէն շինուած, գեղապետ), դեղագետ (լատ . *delegatus* պատուիրակ, եռիրակ, ներկայացուցիչ, փոխանորդ), ագիտացիա (լատ . *agitatio*, յուզումն, շփոթութիւն), թերիա (լատ . *θεωρία*, տեսական, այնպիսորիւն, վարդապետութիւն), դիրեկտոր (լատ . *director*, ողղիչ, տեսալ), դրամ (լատ . *δράμα*, — ի ծրօս բայէն գործել, տանել, — խաղ, արարտութիւն, և այն) : Կը գրէ այլ ոմն Կովկասու թերթերու միոյն մէջ . « Պետերբուրգում շուտով լոյս կ'ընծայուի Դէսպիլիի դրամների թարգմանութիւնն » . Կարծես մաքէն չէ՝ անցած որ այդ կերպով նշանաւոր թարգմարակին դրամների կըրնան չիթթուի իւր գրամներուն հետ . . . դէթ դրամայ գրէր, ինչպէս կ'ընեն այլը : Նոյնն առանց վարանելու կը գրէ դարձեալ . « Շտաբայիս — Штаб-офицеры » առաւերնի և հայերէնի խառնուրդ մի, որ կը նշանակէ առաջ սպայ, վերասպայ, և այն :

Այս բաներս տեսնելն յիշուի շատ ցաւալի է, և մեր արդի գրականութեան և լեզուին

արատ և վնաս կը բերէ։ Ար հայերէն լեզուն, որ՝ ըստ վկայութեան օտարաց ևս՝ ճոխ, ճկուն և դիւրաթեք է, և այնչափ դիւրաութիւն կ'ընծայէ մեզ բարդ բառեր կազմելու, ինչու կ'աղաատենք զայն օտար և մուրացածոյ բառերով, կը կապկպենք զայն, կ'աղաատենք փոխանակ ճոխացնելու, կը պղծաորենք զայն՝ փոխանակ պարզելու։ Այս մասին թուրքահայոց մամուլն աւելի գովիլի է թերևս, որ ըստ կարի կը զգուշանայ օտար բառերու գործածութենէ, և յաճախ կը յալոդի ևս զեղեցիկ բառեր օտեղծել կամ յարմարցնել իւր թերթերուն մէջ։ Իսկ ռուսահայ մամուլն այդ աստիճանն անհոգութիւն կասկած կու տայ թէ, մասնաւոր սկզբամբ չէ որ կ'ընեն այդ բանը, այլ միայն պտուղ է հայերենի ռուսման անհոգութեան կամ տգիտութեան, և տարուէ տարի զգալի յառաջդիմութեան մէջ է զէպ ի... խանգարումն և յաղաաղումն. և պիտի զայ ժամանակ, թերևս շատ ուշ չէ, յորում հայերէն տառերու երևութիւն տակ պիտի ունենանք ռուսերէն կամ փրանկերէն լեզուով թերթեր (Ղոր-Պար, Մշակ, և այլն), և կամ ամէն լեզուէ խառն գրութիւնք զորո հեղինակք միայն պիտի հասկնան. երկանիկ ոսկեղար լեզուի։ Բայց, այսու հանդերձ, չենք կարող ուրանալ թէ Ռուսահայոց օրաթերթք և հանգէսք հմտութեան և բովանդակութեան մասին շատ աւելի ճոխ, բազմակողմանի և գերազանց են քան մեր (թուրքահայոցս) լրագիրներն և հրատարակութիւնք, որոց պարունակութիւնն կամ չըմանակն շատ անձուկ և աղքատ է, և կարելի է այս երեք փոքրիկ բառերուս մէջ ամփոփել. յոր, չիրաւած և վեպ։ Այս բաւական լուրջ խնդիր մ'է, որոյ վրայ թերևս ուրիշ անգամ առիթ ունենամք խօսելու, այդ երևութիւն ներքին և արտաքին պատճառները քննելով։

Այս բոլոր ըսածներէս կ'եզրակացնեմ հետեւեալ երեք առաջարկութիւնները. Ա. Ամենայն լրագրապետք և յօդուածագիրք՝ լաւագոյն չէ՞ր լինե՞ր՝ եթէ քիչ մ'աւելի ուշ դընէին լեզուի յատակութեան, բառերու ճշգրտութեան և բացատրութեանց ընտրութեան, և զգուշանային ո՛ր և է խորթ և օտար բառեր գործածել (որոյ դարմանը տես Գ առաջարկութեան մէջ)։

Բ. Այս ամէն անտեղութեանց առջև աւելու համար, բաց ի հմտութենէ հայերէն լեզուի, որ ամենէն իսկականն է, նոյնչափ կարևոր չէ՞ արդեօք փոքր ինչ հմտաւ ըլլալ նաև յոյն և լատին լեզուաց, որոնք ամենամեծ դեր կը խաղան, ներկայ դարուս լեզուաց՝ գիտութեանց և արուեստից մէջ, և նոքա են բանալի ամենայն ուսումնական բառերու։

Գ. Որպէս զի միակերպութիւն ըլլալ լեզուի և բառերու մեր ամենայն թերթերու և հանդիսից մէջ, կարելի չէ՞ արդեօք լեզուական բարձրագոյն ժողով կամ ճեմարան մի կազմել հայերենի ամենէն աւելի հմուտ անձանցմէ, և անոնց քննութեան և դատաւ տանին ենթարկել այդ տեսակ ուսումնական բառերու ընտրութիւնը։ Ի՞նչ կամ, ինչպէս կ'ընեն եւրոպական թերթերէ ոմանք, այլ և այլ լեզուական կամ բառական հարցեր և խնդիրներ առաջարկել ազգիս բարձրագոյն և հեղինակութիւն ունեցող հանդիսից միոյն մէջ, և ապա նոյն թերթին մէջ հրատարակել իւրաքանչիւր խնդրոյ պատասխանները՝ փաստերով հանդերձ, և ապա ընդհանրացնելով այն բառերը գործածել գրութեանց մէջ։

Քիչքանացի.

